79 **Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

ա.	Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների, Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ, Գնամ ետևից ծիծեռնակների, Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ:	1. Հ. Սահյան
բ.	Արևոտ մի սար եմ հիշում՝ Ճակատին ձյունի պատառիկ, Սարն ի վար բարակ մի առու՝ Շուրթերին հայրեն ու տաղիկ:	2. Պ. Սևակ
գ.	Ուշ-ուշ են գալիս, բայց ո՛չ ուշացած, Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին: Բայց ժամանակից առաջ են ընկնում, Դրա համար էլ չեն ներում նրանց:	3. Ե. Չարենց
դ.	Իմ մահվան օրը կիջնի լռություն, Ծանր կնստի քաղաքի վրա, Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն, Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:	4. Հ. Շիրազ

1) ա-4, բ-1, գ-2, դ-3
2) ա-1, բ-3, գ-2, դ-4
3) ա-2, բ-1, գ-4, դ-3
4) ա-4, բ-2, գ-3, դ-1

80 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են բանաստեղծություններ:**

1) «Պապը», «Չես ասի ոչ մի բառով», «Գանգրահեր տղան», «Վարք մեծաց»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ», «Մայրս», «Առաջադրանք համայն աշխարհի…», «Դեպի լյառը Մասիս»
3) «Կուզեմ հիմի փչե զուռնեն», «Հառաչանք», «Հեռացումի խոսքեր», «Ես իմ անուշ Հայաստանի»
4) «Հայ ժողովրդի երգը», «Քարափը», «Որպես Լաերտի որդին», «Արևին»

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ*:**

1) ա-բարիշտ, ա-փոփոխ, բա-բասանք, հա-բույր
2) ա-բաստանել, ճա-փա, սի-ֆոնիա, ա-բիոն
3) ա-բասիր, ա-պամած, բա-բակ, փա-փուշտ
4) բա-բիշ, հա-պատրաստից, Սա-վել, ճա-պրուկ

2 **Ո՞ր շարքի ոչ մի բառում կամ բառաձևում չի գրվում *յ*:**

1) ուխտադրու-ժ, ծի-ածան, բար-ացակամ, պայուս-ակ
2) աղյուս-ակ, քնքու-շ, Ռաֆա-ել, զգու-շավոր
3) է-ակ, պո-եմ, գու-նագեղ, հաստաբու-ն
4) ժողովածու-ում, սյուն-ակ, փաս-ան, վա-րկյան

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *դ*:**

1) խեղ-ել, խոր-անալ, կորն-արդ, լաջվար-
2) վար-ապետ, խր-վիլակ, որ-ան, բեր-աքաղաք
3) խոր-ուբորդ, բար-ություն, խառնուր-, ար-յունք
4) բր-յա, հար-աշաղախ, ըն-հատում, պար-և

4 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ կա:**

1) ուղեվարձ, ագեվազ, ոսկեվառ, տարեվերջ
2) արտևանունք, գերեվարել, հոգեվարք, գինեվաճառ
3) դրսևորել, բարևագիր, վազեվազ, արժևորել
4) դափնեվարդ, սեթեվեթել, ալեվարս, արևառ

5 **Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ *չկա*:**

1) կայսրուհի, ակնահաճո, ծանրագույն, լուսնէջք
2) մեղրամոմ, չվացուցակ, խորտկարան, գարնանային
3) համրընթաց, հովվական, ճշմարտացի, ոճրագործ
4) աստղագետ, վարչակարգ, պատշգամբ, քաղցրահունչ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:**

1) զառ(ի)վեր, նոր(խարբերդցի), փոխ(ծովակալ), հատակ(մաքրել)
2) մարգ(ընկերություն), մեջ(բերում), օրն(ի)բուն, հյուսիս(արևելք)
3) հարավ(կորեական), ջերմա(մեկուսիչ), թավալ(գլոր), նախա(վայրէջքային)
4) փոքր(ի)շատե, էլ(ցանց), փոխ(ե)փոխ, կազմ(պատրաստ)

7 **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում *մեծատառով*:**

1) ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ, ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆ, ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
2) ՍԵԾ ՄԱՍԻՍ, ԱԼՊՅԱՆ ԼԵՌՆԵՐ, ՆԵՐՍԵՍ Գ ՏԱՅԵՑԻ, ՓՈՔՐ ՄՀԵՐ
3) ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ, ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆ, ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
4) ՓՈՔՐ ԿՈՎԿԱՍ, ՏԻԳՐԱՆ ԿՐՏՍԵՐ, ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ, ՍՈՂՈՄՈՆ Ա ԳԱՌՆԵՑԻ

77 **Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Պատանի Ալեքսանդրը միշտ տխրում էր՝ լսելով Փիլիպոս II-ի հաղթանակների մասին: Նա մտածում էր, որ հայրը կհասցնի գրավել ամեն ինչ, իսկ իրեն չի հաջողվի կատարել որևէ մեծ ու փառավոր գործ: Գորդիս քաղաքում մարտակառքի վրա խճճված հանգույց էր արված, որ կոչում էին Գորդյան հանգույց: Ասում էին, թե այդ հանգույցը քանդողը դառնալու էր Ասիայի տիրակալը: Շատերի թվում այն փորձեց քանդել և Ալեքսանդրը, ու երբ չստացվեց, նա սրով կտրեց այն: Այդտեղից էլ առաջացավ «Գորդյան հանգույցը կտրել» արտահայտությունը, որ նշանակում է վճռականորեն վերջ տալ որևէ խճճված հարցի: Ալեքսանդրը պատմության մեջ մնաց որպես ամենաերիտասարդ ու սիրված աշխարհակալը, որն իր զինվորի հետ կրում էր ռազմական բոլոր դժվարությունները, անգամ անապատում ջուր չէր խմում, քանի որ այն չէր բավարարում զինվորներին, իսկ մենակ խմելը փոքրոգություն էր համարում:

1) Ալեքսանդր Մակեդոնացին մեկ հարվածով կտրել էր մարտակառքի վրա արված խճճված հանգույցը:
2) Ալեքսանդրը վախենում էր, որ իրեն չի հաջողվի հռչակվել ավելի, քան հռչակվել է հայրը:
3) «Գորդյան հանգույց»-ը կապված է Մակեդոնացու անվան հետ:
4) Ալեքսանդրը իր զինվորների հետ կիսում էր պատերազմական դրության անհարմարությունները:

78 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Մեխակի բույրով հովն էր շշնջում հեքիաթներն հազար ու մի գիշերվա
բ. Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, շքեղ գինդերով
գ. Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝ օրորվում էին ճամփեքի վրա
դ. Ծիածանաթև հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով

1) ա, գ, դ, բ
2) բ, գ, ա, դ
3) բ, դ, ա, գ
4) ա, բ, գ, դ

75 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Գոռում են, դողում Թրմկա ձորերը,
Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման.
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում էն Քրոի նման:

1) համեմատություն
2) չափազանցություն
3) մակդիր
4) շրջադասություն

76 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Տիգրան Երկրորդի տերությունը առավելապես ընդարձակվել էր հարավից: Արտաշատը, ինչպես և հինգ հարյուր հազար բնակիչ ունեցող Անտիոքը գտնվում էին նոր տերության հյուսիսային և հարավային մասերում և որպես մայրաքաղաք հարմար չէին:
2. Այն շրջապատված է եղել քսանհինգ մետր բարձրություն ունեցող պաշտպանական հզոր պարիսպներով, պալատը՝ լճերով ու զբոսայգիներով, ունեցել է միջնաբերդ և բազմաթիվ այլ կառույցներ: Կարճ ժամանակում Տիգրանակերտը դառնում է Հայաստանի և Առաջավոր Ասիայի շքեղ, բազմամարդ ու հարուստ քաղաքներից մեկը:
3. Տիգրանակերտը պատմական Հայաստանի արքայանիստ քաղաքն էր Աղձնիք նահանգում: Հայկական բանակի գլուխն անցած՝ Տիգրան Մեծը իրար հետևից հնազանդեցնում է հարևան մեծ ու փոքր թագավորությունները՝ Հայաստանի սահմանները հասցնելով Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով, Քուռ գետից մինչև Միջագետք:
4. Մ.թ.ա. 70-ական թվականներին Աղձնիքում՝ Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակ Քաղիրթ գետի հովտում, հիմնադրվում է նոր մայրաքաղաք Տիգրանակերտը: Ըստ հույն պատմագիր Ապիանոսի՝ քաղաքը կառուցվում է Տիգրանի թագադրության վայրում:

1) 3, 2, 4, 1
2) 3, 1, 4, 2
3) 2, 1, 3, 4
4) 1, 3, 2, 4

8 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն *կա:***

1) սուզանավ, ցուցարար, պտտահողմ, ձեռնունայն
2) զրուցասեր, արնակոլոլ, բուրումնալից, սառցարան
3) թուլակամ, ատենապետ, կուսակրոն, վայրկենացույց
4) թռչնաբուծարան, առօրեական, եղջերավոր, բնավեր

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին վանկը շեշտված չէ:**

1) մանր, արծաթագույն, գրադարան, Լոռի
2) որերորդ, միմիայն, ցույց տալ, կարծր
3) միթե, իններորդ, զբոսայգի, ծաղկափթիթ
4) թրմփ, կատու, վագր, բաց անել

10 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:
2) Դժվար էր առանց սարսուռի նայել հողածածկ այդ խուղերի մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
3) Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:
4) Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:

11 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1) Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, ցին ու ագռավ աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին:
2) Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն:
3) Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին:
4) Ֆետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մանուշակը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էին եռոտանին և այն բարակիրան կինը:

12 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) *մազը գերան դարձնել* - չափազանցնել, *մի տան պես* - հարազատորեն
2) *կապը կտրած* - սանձարձակ, *ծովը տանել՝ ծարավ բերել* -խորամանկ լինել
3) *խոսքի կծիկը բացել* - խոսակցություն սկսել, *գառան մորթի հագնել* - միամիտ ձևանալ
4) *խոսքը տեղը բերել* - հարմար առիթով դիպուկ պատասխան տալ, *գենքի հետ խաղալ* -սեփական անձը վտանգել

13 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:**

1) բաժանվել - մասնատվել, բանտարկություն - կալանք, թեզանիք – մանյակ, մեկենաս - բարեգործ
2) ամբարտակ - պատնեշ, բարձրարվեստ - նրբաճաշակ, բացատրել - լուսաբանել, ազնվաբարո - առաքինի
3) բարձրանուն - մեծահռչակ, բեկում - շրջադարձ, բթամիտ - թանձրամիտ, ուստր - ոստրե
4) բրուտ - ատաղձագործ, անգիր - բերանացի, բացի - զատ, բերկրավետ - ուրախալի

14 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

1) ամրակուռ - խարխուլ, օրենսդիր - ապօրինի, հերաթափ - թավամազ, մեծախոս - համեստ
2) հանապազօրյա - ամենօրյա, շեն - ավերակ, խորամանկ - դյուրահավատ, համատեղ - անջատ
3) գորովագութ - անբարեսիրտ, ուղղամիտ - նենգամիտ, կուշտ - անոթի, վատաբանել - բարեբանել
4) ուխտավոր - ուխտագնաց, արևոտ - ամպազարդ, աղմկաշատ - խաղաղ, գթառատ - դժխեմ

15 **Ո՞ր շարքում հոդակապ չունեցող բառ կա:**

1) միջակոտոր, մենատնտես, մեծակոհակ, մաքրահոգի
2) մրահոն, մարտահրավեր, մահճակալ, մահաճառ
3) միջամտել, հռչակագիր, հրապարակ, հրաբողբոջ
4) ճրագակալ, ճապաղախոս, ճաճանչափայլ, հողածին

16 **Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-յալ* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

1) սառցալեռ
2) ախտանիշ
3) ուսադիր
4) անցանկալի

17 **Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) ռազմերգու, ջղաձգորեն, ընչազրկում, երկերեսանի
2) միաձուլում, մեղսունակ, ուսումնասեր, նույնահնչյուն
3) թիկնոցավրան, սպիրտայրոց, յուղաքսուք, նավթապահեստ
4) արյունազեղում, հաղթաբազուկ, աչառու, նեղաչք

18 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) կիլոմետրեր, ջահակիրներ, ֆիդայիններ, տիկիններ
2) կողակիցներ, ոտնաչափեր, հացթուխներ, դուստրեր
3) ուղեցույցներ, երկրապահներ, կետաձկներ, հարթաչափներ
4) հավկիթներ, սպունգներ, մանրաթելեր, կայծքարեր

19 **Տրված բառերից քանի՞սն են ենթարկվում *ու* հոլովման:**

Անկողին, պապ, վարգածի, օղ, մարդ, խնկեղեգ, ամուսին, արարել, անկարգել, եթովպացի:

1) հինգը
2) վեցը
3) յոթը
4) ութը

72 **Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Աննկատելի ներս մտնելով՝ Սմբատը զգաց, որ թղթախաղը, որն սկսվել էր արևածագից առաջ, Միքայելին բոլորովին այլափոխել է:

1) **թղթախաղը** - ենթակա
2) **որն** - ենթակա
3) **Միքայելին** – հանգման անուղղակի խնդիր
4) **այլափոխել է** - պարզ ստորոգյալ

73 **Թվերի ո՞ր հաջորդականությունն է ճիշտ նշում այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Օրը հարյուր անգամ նա մոտենում էր այդ փնջին և իր քնքուշ մատներով շոշափում թորշոմած վարդերը, որոնց թերթիկները, մեկիկ-մեկիկ պոկվելով, ընկնում էին վար ու անհետանում:
2. Լուսնկա գիշերներին ծովափին՝ խարույկի մոտ, երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց քաղցրահունչ սազի հոգեհմա ելևէջները, ծովի անուշ ձայնը:
3. Մի աղջիկ էր՝ անպաճույճ զգեստով, մետաքսյա նուրբ շալով. անակնկալի եկած կանգ առավ:
4. Այդ քաղաքում ես քնելու տեղ չունեի և ամեն անգամ փողոցներում էի թափառում, և կամ մեկ-երկու օրով մնում էի ընկերոջս՝ Տիգրանի վարձած սենյակում:
5. Տեսնելով ամբարիշտ հարևանին՝ Մինասին, զգալով նրա ստոր մտադրությունները՝ Թևոսը ծառերից կտրելով չոր ճյուղափայտեր՝ խրեց ցանկապատի մեջ:

1) 2, 4, 5
2) 4, 5
3) 1, 5
4) 3, 4, 5

74 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուլ պիտի լինի (նախադասությունները կետադրված չեն):**

Ահա(1) սեղանին է դրված նրա երկրորդ գրքույկը(2) «Բուլղար ավազակապետը»(3) գրված բոլորովին վերջերս: Դա մի գեղեցիկ վեպ է(4) գեղարվեստական տեսակետից օրինակելի(5) բոլոր անճաշակ վիպագիրների համար: Զարմանում ենք միայն(6) ինչպես կարող են մարդիկ այս գրքից հետո ընտրել նախորդը: «Բուլղար ավազակապետը»(7) իբրև գեղարվեստական կառույց անթերի է բայց այնուամենայնիվ(8) մենք համակիր չենք մեր ուսանողների գործունեության այս ընթացքին: Նույն կերպ էլ «Դոն Կիխոտի» հերոսը չէր կարող անցած-գնացած ասպետությունը վերականգնել(9) նրա փորձը տկար ուղեղի տեր մարդիկ են անում(10) անմտաբար ընկնելով սարդերի ոստայնած որոգայթի մեջ:

1) 1, 2, 3, 4, 6, 7, 10
2) 2, 3, 4, 6, 7, 10
3) 2, 3, 4, 5, 6, 7, 10
4) 2, 3, 4, 6, 7, 8, 9, 10

70 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

1. *Անտառամիջյան ճանապարհով դեպի գյուղ էին իջնում ցորենի խրձերով ծանրաբեռնված մի քանի սայլեր:*
   Մի քանի սայլեր, որոնք գյուղ էին իջնում անտառամիջյան ճանապարհով, ծանրաբեռնված էին ցորենի խրձերով:
2. *Ալֆոնս Դոդեի հումորի նրբությունը անհասկանալի է Ֆրանսիայում չապրող մարդուն:*
   Մարդուն անհասկանալի է Ալֆոնս Դոդեի հումորի նրբությունը, եթե նա Ֆրանսիայում չի ապրում:
3. *Չնայած արդեն ալեզարդ ծերունի լինելուն՝ Շիրվանզադեն արվեստի խնդիրներում պատանու պես խանդոտ էր ու բռնկուն:*
   Թեև Շիրվանզադեն արդեն ալեզարդ ծերունի էր, արվեստի խնդիրներում նա պատանու պես խանդոտ էր ու բռնկուն:
4. *Նա համաձայն չէր թատերագրի՝ իբրև ստեղծագործողի, թատրոնում երկրորդական լինելու գաղափարին:*
   Նա համաձայն չէր այն գաղափարին, որ թատերագիրը՝ իբրև ստեղծագործող, երկրորդական է թատրոնում:

1) մեկը
2) երկուսը
3) երեքը
4) չորսը

71 **Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Դուք պատասխանեցիք նավապետին, որ սպասել չեք կարող, և ավելացրիք, որ նա թողնի դասալիքին իր տեղում ու զբաղվի ձեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք ձեզ:

1) Դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք.
   -Սպասել չենք կարող, Դուք թողեք դասալիքին իր տեղում ու զբաղվեք մեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք ձեզ:
2) - Նավապե՛տ, սպասել չենք կարող, - դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք, - Դուք թողե՛ք դասալիքին իր տեղում ու զբաղվե՛ք նրանց մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք նրանց:
3) - Սպասել չենք կարող, - պատասխանեցիք դուք նավապետին և ավելացրիք, - Դուք թողե՛ք դասալիքին իր տեղում ու զբաղվե՛ք մեր մեկնումով, որովհետև նրանք պետք է դիմավորեն մեզ:
4) - Սպասել չենք կարող, - դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք, - թողե՛ք դասալիքին իր տեղում և զբաղվե՛ք ձեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք նրանց:

20 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

1) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
2) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
3) Մռայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
4) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:

21 **Տրվածներից քանի՞սն են ածականի գերադրական աստիճան:**

Ամենակուլ, ամենազորեղ, ամենահաղթ, ամենագութ, ամենաբարի, ամենագնաց, ամենադավ, ամենագետ, ամենակեր, ամենատես:

1) երեքը
2) երկուսը
3) չորսը
4) բոլորը

22 **Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն չկա:**

1) Ծեր գամփռը դեռ սպասում էր, թե պառավն ինչ է ասելու:
2) Անդոն միշտ նրան օգնել է, ինչով կարողացել է:
3) Գիքորը հասկացավ, որ ինքը գամված է այդ ճանապարհին այնպես, ինչպես Ալխոն՝ այդ բեռանը:
4) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր:

23 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) մի՛ եկ, հասկացել եմ, զայրացել է, տվեց
2) ասաց, տո՛ւր, դարձի՛ր, դողաց
3) պիտի հուսանք, թողել եմ, գալիս է, վշշում է
4) եղա, հավատալ, խոսող, զղջում է

24 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:**

1) չերգեցի, գրվելու է, խոնարհվեցին, չգնայի
2) տալիս է, կամենում ես, ցանկանք, փախավ
3) կային, չհուսահատվեցին, չգիտեն, խնդրեց
4) պիտի որոշվի, խոսում եմ, գնացել էինք, մոտեցրի

25 **Ո՞ր նախադասության մեջ ժխտական ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

1) Է՜հ, ի՞նչ արած, բախտը խռով
   Թող աշխարհում մեզ չհիշի….
2) Գնա՛, միշտ գնա՛, իմ քարավանս, և քայլի՛ր մինչև օրերիս վերջը…
3) Մի տեսակ տագնապ կա, որ
   Չես ասի ոչ մի բառով….
4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
   Հարկավոր չէ ինձ ո՛չ ծաղիկ, ո՛չ սուգ…

26 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ չկա:**

1) Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
2) Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախշազարդ քարի:
3) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:
4) Երազ աշխարհում Ամեն բան հավետ
   Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:

27 **Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ամբողջ հորիզոնը ծածկված էր ամպերով այգու գողտրիկ տաղավարը թթենու փարթամ սաղարթներով:
2) Օ հիմար տգետ համբակ մարդ դու խոսում ես իմ հոր և արքայից արքայի մասին:
3) Աթենացիները իմիջիայլոց հռոմեացիների նման ի պատիվ իրենց կաճառներում մեծ նշանակություն էին տալիս զրուցելու արվեստին:
4) Գրիչները իրենց սեղաններին լուռ ու ինքնասույզ խոնարհված հայոց սքանչելի տառերը դրոշմում են մագաղաթին իրենցից հետո եկողներին հաղորդելու:

28 **Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված :**

1) Ամեն ինչ դարձել է անցյալ,
   Ու մենք առափնյա այգում ենք դարձյալ: *(անորոշ դերանուն)*
2) Իմ տխուր հոգում ծագում է ոսկի
   Ճաճանչը հուսո հարատև կյանքի: *(գոյական)*
3) Մանուկ պահելը ծանր է ավելի: *(անորոշ դերբայ)*
4) Անդարձ կորել է սրտիս խնդումը,
   Թունոտ մի մեգ է իջել հոգում իմ: *(գոյական)*

29 **Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ կա:**

1) Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,
   Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
2) Կմոռանամ հեռվի աղմուկը ահեղ,
   Կզգամ համբույրը ուրիշ օրերի:
3) Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
   Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան:
4) Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
   Երեկոն վառեց լույսեր դժգունակ:

30 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Թող իմ մասին քո ունեցած որոշ հիշողություններ չխամրեցնեն ուրախությունդ:
2) Ինձ է հասնում այն ծովայինների երգը, որոնք պատրաստվում են ափ հանել իրենց նավակները:
3) Մեր նկարների մի մասը մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո ուղարկվեցին Պրահա:
4) Ողջ գյուղն անհամբերությամբ սպասում էր նրանց, ովքեր հաղթանակով էին վերադառնում պատերազմից:

67 **Ո՞ր ստորադաս նախադասությունն է շաղկապով կապակցվել գերադասին (գլխավորին):**

1) Թեկուզ դարն է ծնում, և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի, Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում:
2) Ուրախ և ցնծալից է Վարդավառը, որ գալիս է հեթանոսական ժամանակներից:
3) Լեռների ոտների տակ հևում էր ծովը, ուր լուսափետուր որորները քնքշորեն խփում էին իրենց կուրծքը կոհակներին:
4) Արևը որքան բարձրանում էր, այնքան Արարատյան դաշտավայրը խնկարկում էր իր անուշահոտությունը:

68 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Զորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն:
2. Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում:
3. Փոքր-ինչ հետո նա դեմ առավ իրերի կույտի, որ բաղկացած էր հին փամփուշտներից, քայքայված դաշույններից, թրերից:
4. Դու, որ այդպես էլ չհասկացար աշխարհի չարն ու բարին, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մենության:

ա. որոշիչ
բ. վերաբերության խնդիր
գ. հանգման խնդիր
դ. ենթակա
ե. բացահայտիչ

1) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե
4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ

69 **Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:**

1) Կարծես թե դարձել եմ ես տուն,
   Բոլորն առաջվանն է կրկին….
2) Տեսա երազ մի վառ,
   Ոսկի մի դուռ տեսա…
3) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,
   Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
4) Քո խոսքերից անդունդներ են բացվում սրտիս,
   Քո հայացքից սարսռում է ժայռը սրտիս:

63 **Ընդգծված անկանոն բայերից որի՞ մեջ է անկանոնություն դրսևորվել:**

1) Թող **գան,** խնդրեմ, բոլոր նրանք, Ովքեր գիտեն փայլատակել կարմիր գինու թնդությունից...
2) Ասա՛ ում ընկերն ես, **ասեմ՝** ով ես դու:
3) Աչքով չես **տեսնի,** սիրտն է սրատես:
4) **Եղի՛ր** քաղաքավարի բոլորի հետ, մարդամոտ՝ շատերի հետ, տնավարի՝ ոմանց հետ:

64 **Տրված հատվածի առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Բացված է արդեն մի ուրիշ երկիր,
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,-
Ոսկի հայացքով կախարդել է նա,
Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր….

1) **բացված**-հարակատար դերբայ, չեզոք սեռ, **ուրիշ**-անորոշ դերանուն
2) **բայց**-համադասական շաղկապ, **հիմա**-ժամանակի մակբայ
3) **հայացքով-** հասարակ գոյական, գործիական հոլով, **կախարդել է**-բայ, անցյալ ժամանակ
4) **այլ**-անորոշ դերանուն, **լցրել**-անորոշ դերբայ, ներգործական սեռ

65 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

-------- վերականգնում կամ վերանորոգում ենք կիսաքանդ վանքերը՝ դրանք -------- մեր ------- քարե հիշողության արթուն մասունքները, բայց մի՞թե Վարդանի -------- կաղնին պատմական հուշարձան չէր:

(1.ժողովուրդ, 2.ես, 3.տնկել, 4.համարել)

1) 2, 3, 4, 1
2) 2, 3, 1, 4
3) 2, 4, 1, 3
4) 2, 4, 3, 1

66 **Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

1) Մի սարսուռ էր անցնում նրա մարմնով, երբ մտածում էր հարազատների կողմից ստեղծված խոչընդոտների մասին:
2) Այդ առեղծվածային դեպքերից մի քանի օր շարունակ լարված իրավիճակ էր ստեղծվել ողջ քաղաքում:
3) Նրան մեծ պատիվներով ու շուքով ընդունեցին Աշոտ արքայազնի հոր՝ Գագիկի նստավայրում:
4) Այդ մարդը, որ հակված էր բյուզանդական կայսեր հետ բարեկամական դաշինք կնքելուն, հիմա խորը տարակուսանքի մեջ էր:

31 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ *չկա:***

1) Ես դրանում տեղյակ չեմ եղել, և ասածդ նորություն է ինձ համար:
2) Ես երախտապարտ եմ Ձեզնից անշահախնդիր օժանդակության համար:
3) Մեր ժողովներում բազմիցս նշել ենք այդ մասին, քննադատել անզիջում:
4) Նրանց անգործությունը լրջորեն խանգարում է արդյունաբերության զարգացումը:

32 **Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ *կա:***

1) Վտանգավոր է փորձված ընկերոջը ոչ այնքան չվստահելը, որքան անփորձ բարեկամին գաղտնիքներ հայտնելը:
2) Ով գաղտնապահ է, բերանը սրտում է պահում, իսկ ով գաղտնապահ չէ, սիրտն է բերանում պահում:
3) Բնականն այն է, որ խիղճը պիտի հետևի ճշմարիտ բանականությանը:
4) Նա, ում խոսքերում ճշմարտություն կա, և գործերում՝ արդարություն, երկինք սլանալու համար կրկնակի թևեր ունի:

33 **Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Այնտեղ էր նաև Օհանը՝ աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած մի ծերունի:

1) Այնտեղ էր նաև Օհանը, որը աշխարհի չարն ու բարին տեսել, սեփական փորձով հարստացել էր:
2) Այնտեղ էր նաև Օհանը՝ մի ծերունի, որը աշխարհի չարն ու բարին տեսել էր, սեփական փորձով հարստացել:
3) Այնտեղ էր նաև Օհանը, որը աշխարհի չարն ու բարին տեսել էր և սեփական փորձով հարստացած մի ծերունի էր:
4) Այնտեղ էր նաև Օհանը, որ աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած մի ծերունի էր:

34 **Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Ճանապարհի դեպի Գանձակ տանող հատվածում նրանք տեսան հայ-թուրքական բախումների սոսկալի հետևանքները ամայացած բնակավայրեր կիսավեր տներ ծխացող ավերակներ: Ուղեկցորդը վագոն մտնելով խորհուրդ տվեց տղաներին չիջնեն գնացքից:

1) տրոհված հատկացուցիչ
2) բացահայտիչ
3) բազմակի անդամներ
4) տրոհված որոշիչ

35 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Աստված մարդուն տվել է ուշիմություն, այսինքն՝ բարեփոխվելու հնարավորություն, և մարդը, գիտակցելով այդ, պետք է ձգտի կատարելության:
2) Ով կարողանում էր մազապուրծ փախչել, հանդիպում էր զինվորներին, որոնք, մտածելով, թե պավլիկյաններն են հանկարծակի հարձակվել քաղաքի վրա, անխնա կոտորում էին բակերում ու այգիներում թաքնվել փորձող քաղաքացիներին:
3) Խառնիճաղանջ մտքերից ավելի շփոթվեց, սփրթնեց, սիրտը թպրտաց և պարզորոշ լսեց արյան զարկերը քունքերում:
4) Պատահական չէ, որ բնիկների՝ այս ջրվեժին տված անունը պահլավական ծագում ունի:

36 **Ո՞ր տարբերակում փոխանունություն կա:**

1) Ուրիշ աչքեր են լալիս,
Ուրիշ ձեռքեր են գալիս
Սեղմում ձեռքերս:

2) Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:

3) Կխեղճանար քամին,
Հողմը կխեղճանար,
Ձեռ կթոթվեր ծառին,
Կանցներ ու կգնար…

4) Ու թե աստված եք,
Ամուր փակեցե՛ք ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց…

37 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հիշյալ արձանները, որոնց բարձրությունը մոտ 8 մետր է, կրաքարե խոշոր վեմերից են:
2. Ըստ գոյություն ունեցող փաստերի՝ Նեմրութը Արևմտյան Հայաստանի միակ գործող կամ ժայթքման ենթակա հրաբուխն է, որ մի օր հիմնովին սրբելու է հետքերը իր շրջակայքում կուտակված օտար ցեղերի, որոնք բնօրրանից քշել են տերերին :
3. Հնագույն հայկական Կոմագենե երկրում՝ Նեմրութ լեռան վրա, 19-րդ դարում հայտնաբերվել է Անտիոքոս Ա թագավորի կառուցած դամբարանաբլուր-սրբավայրը, որի արևելյան և արևմտյան կողմերում դրված են արձաններ, բարձրաքանդակներով արձանագրություններ:
4. Վիմային արձանների կենտրոնում Արամազդ-Զևսն է, որի կողքերին Միհր-Ապոլոնը և Արտագնես - Հերակլեսն են, ապա՝ Անտիոքոս Ա-ի արձանը:

1) 3, 4, 1, 2
2) 1, 4, 3, 2
3) 2, 4, 3, 1
4) 3, 1, 4, 2

57 **Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

1. շարական	ա. ստեղծագործական ներշնչանք
2. ջնարակ	բ. հոգևոր երգ
3. ոստան	գ. սարդի հյուսած ցանց
4. ոստայն	դ. խեցեգործական առարկաների ապակեներկ
5. մուսա	

1) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-բ, 2-դ, 4-գ, 5-ա
4) 1-բ, 2-դ, 3-գ, 5-ա

58 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) հեղուկազրկում - ***հեղ, զուրկ***՝ արմատներ, ***ուկ, ում***՝ վերջածանցներ, ***ա*** ՝ հոդակապ
2) սննդամթերք - ***սուն, մթեր***՝ արմատներ, ***ունդ, ք***՝ վերջածանցներ, ***ա*** ՝ հոդակապ
3) ստնտվություն - ***սուտ, տու***՝ արմատներ, ***ություն***՝ վերջածանց
4) հետաքննիչ - ***հետ, քնին***՝ արմատներ, ***իչ***՝ վերջածանց, ***ա*** ՝ հոդակապ

59 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) *աչք ածել* - շուրջը նայել, *հոգու աչքեր* - ներզգացողություն
2) *կոտր ընկնել* - ջարդվել, *սրտում կրակ վառել* - ոգեշնչել
3) *ուղտը պոչով կուլ տալ* - գռփող լինել, *օձի կծած* - չար և անգութ
4) *աջ ու ձախ նայել* - քայլերը կշռադատել, *սիրամարգի փետուրներով ագռավ* - արտաքին շքեղությամբ ներքին դատարկությունը ծածկող մարդ

60 **Ո՞ր նախադասության մեջ բայի բաղադրյալ դիմավոր ժամանակաձև կա:**

1) Չգիտեմ՝ վերարկուն ինչ արժե, որովհետև մի անգամ գնացի, որ նայեմ, խանութը փակ էր, ցուրտ էր, վազելով հետ եկա:
2) Ես մտածեցի, որ հիմա նրանք պիտի որ հասնելիս լինեն անտառի բացատին:
3) Նրա հետևից դուրս է գալիս մի կին՝ ինչ-որ բան շպրտելով շան կողմը:
4) Սարի վրա ամպ կա. շուտով այս ամպը պիտի իջնի սարի վրայով և փռվի մեր ձորերի վրա:

61 **Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով:**

1) պիտի գնամ, մոտեցի՛ր, չես խաղա, քննարկվելու է
2) կբարձրանամ, չենք դիտելու, հանդիպում է, խոսենք
3) մի՛ գրիր, կնկատեի, լռելու ենք, կբերի
4) պիտի գար, նստեմ, կհեռանա, գնացե՛ք

62 **Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ չկա:**

1) Զարմացած նայեցի նրա դեմքին. այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և՛ զայրույթ, և՛ պաղատանք:
2) Ուղեկցուհիս շատ էր տխրել և այլևս ոչինչ չէր խոսում:
3) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:
4) Նա փախավ մի քսան քայլ հեռու, կուչ եկավ մի ծառի տակ և գիրքը թևի տակ առավ:

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *n*-ն է արտասանվում *o*:**

1) ան<u>ո</u>րակ, ան<u>ո</u>ղոք, մարդա<u>ո</u>րս, ութ<u>ո</u>տնուկ
2) ան<u>ո</u>րոշ, սառն<u>ո</u>րակ, վաղ<u>ո</u>րդայն, կրծ<u>ո</u>սկր
3) տարբ<u>ո</u>րոշել, հնա<u>ո</u>ճ, ձկն<u>ո</u>ւս, ան<u>ո</u>ւսալի
4) քաջ<u>ո</u>ւրդի, ան<u>ո</u>ղնաշար, հանապազ<u>ո</u>ւրդ, արջա<u>ո</u>ւս

52 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՌՊՀԲ - 1672
2) ՅԿԹ - 379
3) ՆԾԱ - 451
4) ՌՇԽԳ - 1943

53 **Տրված բառաշարքերից քանիսի՞ բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում միևնույն տառը (տառակապակցությունը):**

1. հեք-թ, պատան-կ, դաստ-րակ, եղ-մ, միմ-նց, Սուք-ս
2. կաթնահուն-, աղ-ան, կ-կտուր, հանդիպակա-, ասացվա-ք, թյուրիմա-ություն
3. գա-ա-, մր-յուն, զի-ել, լա-վարդ, զեղ-ել, խառնիճաղան-
4. թրթու-, կա-կառել, ախտ-ժակ, կ-ծել, ա-տուլտ, հ-չակ

1) ոչ մեկի
2) մեկի
3) երկուսի
4) երեքի

54 **Տրված բառերից քանիսո՞ւմ երկհնչյունի հնչյունափոխության *կա:***

Հավիտենական, բարյացակամ, կուսակից, քաղցրահնչյուն, ստուգայց, որդյակ, պաճուճանք, աղմկահույզ, սառցակալում, ծառաբուն:

1) վեցում
2) յոթում
3) չորսում
4) հինգում

55 **Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***նիգ*** - մետաղյա ամուր ձող, ***հովեկ*** - զեփյուռ,մեղմ քամի
2) ***հոլանի*** - մերկ, բաց ուսերով, ***խոնջանալ*** - հոգնել
3) ***եռոտանի*** - երեք ոտք ունեցող, ***դերձան*** - կարի թել
4) ***դարակազմիկ*** - դարաշրջան կազմող, նշանավոր, ***մախաթ*** - մեծ ասեղ

56 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:**

1) ***խուլ*** ծերունի – ***խուլ*** փողոց
2) ***բարակ*** թել - արագավազ ***բարակ***
3) քեզ ***համար*** - ***համար*** մեկ
4) նորաձև ***հանդերձ*** - ընտանյոք ***հանդերձ***

38 **Որ հատվածը հայերենի ո՞ր տարբերակով է:**

1. Մեղք իմ բազում են յոյժ,
   Ծանր են, բան զաւազ ծովու.
   Քանզի քեզ միայնոյ մեղայ
   Ողորմեա ինձ, Աստուած:
   — ա. արևմտահայերեն

2. Կ՚ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
   Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
   Կ՚ուզեմ որ մեռնին տիվ ու ժամանակ՝
   Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր:
   — բ. արևելահայերեն

3. Ամենայն տեղ մահը մի է,
   Մարդ մի անգամ պիտ մեռնե.
   Բայց երանի՜, որ յուր ազգի
   Ազատության կրզոհվի:
   — գ. միջին հայերեն

4. Երեսդ է լուսնի նըման բոլորեալ տեսդ՝ արեգական.
   Ոնց որ դու ելնես քալես, արեգակերպ կու փայլես:
   — դ. գրաբար

1) 1-ա, 2-գ, 3- բ, 4-դ
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ

39 **Ո՞ւմ պատմությունն է ժամանակագրական առումով Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկի շարունակությունը:**

1) Մովսես Խորենացու
2) Ղազար Փարպեցու
3) Փավստոս Բուզանդի
4) Եղիշեի

40 **Ո՞ր պնդումը ճիշտ չէ «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ:**

1) Մինչև Խանդութի հետ ամուսնանալը Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, ումից ծնված աղջիկն էլ հետագայում թունավոր նետով սպանում է հարազատ հորը:
2) Քանի որ Փոքր Մհերը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և հոր վրեժը լուծել, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:
3) Կրտսեր Մսրա Մելիքի հայրն է Մեծ Մհերը:
4) «Սասնա ծռերը» բաղկացած է չորս ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը վերնագրված է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով:

41 **Ո՞վ է հետևյալ քառատողի հեղինակը:**

Ուրիշ բլբուլ կգա, կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե - նա՛ կասե վաղը,
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

1) Նահապետ Քուչակը
2) Ֆրիկը
3) Եղիշե Չարենցը
4) Սայաթ-Նովան

42 **Ո՞ր պնդումն է սխալ:**

1) Հայ իրականության մեջ առակագրությունը ունեցել է բացառապես գրական ծագում:
2) Մխիթար Գոշի առակներում առանցքայինը կենտրոնացված միապետության գաղափարն է, հպատակների հնազանդ լինելը պետության գլուխ կանգնած թագավորին:
3) Վարդան Այգեկցին հայ գրականության մեջ սկզբնավորել է առակավոր ճառի տեսակը:
4) Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին երբեմն օգտվել են Եզոպոսի առակներից և դրանք վերամշակել:

43 **Տրված հատվածը Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Ես պիտի դուրս գամ դեպ հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:

1) «Ազատություն»
2) «Ապոլլոնին»
3) «Իտալացի աղջկա երգը»
4) «Մանկության օրեր»

44 **Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վերաբերյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:**

1) Դեմիրճյանը «Վարդանանք» պատմավեպում Վարդանանց պատերազմը ներկայացրել է որպես ազգային-ազատագրական պայքար, որը մղվում էր հայրենիքի ինքնուրույնության, ազգային մշակույթի և ազատության համար:
2) «Վարդանանք» պատմավեպում հեղինակը իրադարձությունների զարգացման շղթայում գերապատվությունը տվել է նախարարներին և հոգևորականներին՝ շրջանցելով ժողովրդի դերն ու նշանակությունը:
3) Դեմիրճյանի համոզմամբ Ավարայրի ճակատամարտում հայերը տարան իրական հաղթանակ, որի շնորհիվ կարողացան պահել իրենց կիսանկախ վիճակը:
4) Պատմավեպը գրելիս հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է փաստերը՝ թափանցելով պատմական իրադարձությունների էության մեջ:

45 **Ո՞րն է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի գլխավոր նպատակադրումը:**

1) ազգի մտավորականներին մուրացկանության համար մեղադրելը
2) ազգի մեծահարուստ մարդկանց բթամտությունը ցույց տալը
3) մտավորականների թշվառ վիճակի նկատմամբ ազգային մեծատունների անտարբերությունը ցույց տալը
4) գլխավոր հերոսի ամուսնության ճախողման վերաբերյալ զվարճալի պատմություն ստեղծելը

46 **Ո՞ր շարքում են միայն Ռաֆֆու վեպերը:**

1) «Ոսկի աքաղաղ», «Խենթը», «Կայծեր», «Ջալալեդդին»
2) «Հարեմ», «Սամվել», «Առաքյալը», «Սալբի»
3) «Ոսկի աքաղաղ», «Ջահրումար», «Նամուս», «Սամվել»
4) «Դավիթ-Բեկ», «Կյորես», «Ոսկի աքաղաղ», «Խենթը»

47 **Ո՞ր միտքն է հակասում Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի սյուժեին:**

1) Ցլիկ Ամրամը ապստամբել է թագավորական իշխանության դեմ և դաշնակցել է աբխազների Բեր թագավորի հետ:
2) Սահականույշ թագուհին, խոցված իր թագավոր ամուսնու դավաճանությունից և իր հարազատների նկատմամբ գործած դաժան արարքներից, փորձում է դաշնակցել Աբասի հետ:
3) Աշոտը արաբների դեմ կռվելու գործում Սահակ Սևադայի աջակցությունն ունենալու համար ամուսնանում է նրա դստեր՝ Սահականույշի հետ:
4) Գևորգ Մարզպետունու հավաքած փոքրաթիվ քաջերի հետ արաբ Բեշիրի բանակի դեմ կռվում էր նաև նրա միակ որդին՝ Գոռը:

48 **Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի «ոսկի երիտասարդության» ներկայացուցիչները:**

1) Մելքոն, Մոսիկո, Սրաֆիոն Գասպարիչ
2) Քյազիմ բեկ, Սուլյան, Սմբատ
3) Գրիշա, Չուպրով, Պետրոս Ղուլամյան
4) Նիասամիձե, Պապաշա, Միքայել

49 **Գրիգոր Զոհրապն իր ո՞ր նորավեպում է հերոսուհու մահը համեմատում խրախճանքի սեղանի վրա ցնծության մաղթանքների ժամանակ, այլ ոչ խոհանոցի աղտոտ ջրի մեջ կոտրված բաժակի հետ:**

1) «Փոստալ»
2) «Այրին»
3) «Այինկա»
4) «Երջանիկ մահը»

50 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

ա. Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին
բ. Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին
գ. Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր
դ. Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին

1) ա, դ, բ, գ
2) բ, ա, գ, դ
3) ա, դ, գ, բ
4) ա, բ, գ, դ